

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպէկով:

Քիֆի-ուս գրութեան և միջազգային խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тафлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողաւորին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՈՒՆԻ

ԲԱՆՃԱՎՈՐ Է ԿԷՍ ՏԱՐԱՎԱՅ ԲԱՍՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԲԱՆՃԱՎՈՐ Է ԿԷՍ ՏԱՐԱՎԱՅ ԲԱՍՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՄՇԱԿ» վեց ամսվայ գինն է, յուլիսի 1-ից մինչեւ տարեկան վերջը, 48 ռուբլի, մէկ ամսվայը—մէկ ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարեկան համար 3 ռուբլի: Եւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ:
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելու, պէտք է գիտնել հետեւեալ հասցէով. ТАФИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լիզուներով:

ԱՊՐԱՌԻԿ ԲԱՍՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԱՆՃԱՎՈՐ Է ԿԷՍ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակոսեայ գրոյց. Նամակ էլ միջազգային, ներքին յուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին յուրեր. —ԽԱՌՆ ԼՈՒՆՔԱՆ. —Մանրանկար. —ՀԵՐԱԳԻՐՆԵՐ. —ՅԱՏԱՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆՃԱՎՈՐԱԿԱՆ. Նամակ Կայտարարութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆԻՍԻ ԶՐՈՅՑ

Որքան շատ նահատակներ ունենք մեր շուրջ. Դիակներ մի ամբողջ կոյտ, սպանվածների մի ամբողջ գերեզմանատուն...

Մեր են դրանք, այդ զոհերը, հարցնում էք յուր. —Ես ինքս էլ չը գիտեմ, ես ինքս էլ չեմ տեսնել: Եւ եթէ ասում եմ, թէ կայ մի այդպիսի բան մեզանում, ասում եմ, կրկնելով ուրիշների խօսքերը: Լսում եմ ես այդ խօսքերը արարելից ի վեր: Մի երգ է դա, որ տարեց-տարի կրկնվում է միանման լալկան շնչերով, միանման բառերով: Այդ երգը խօսում է սպանվածների, նահատակների մասին, ողբում է շահաւոր, անընդհատ: Եւ ականջ դնելով նրան, արթնում ես, թէ սպանվածների, զոհվածների թիւը շատ եւ շատ մեծ պիտի լինի:

Բայց նախ եւ առաջ ասեմ, որ ես խօսում եմ միայն գրական աշխարհի մասին: Այդտեղ, այդ աշխարհում պիտի լինի դիակների կոյտը, զոհերի գերեզմանատունը: Աւելի առաջ գնալով, ես պիտի ասեմ եւ այն, որ այդ անգուլթ կու-

տորածը «Մշակի» գործն է, գոնէ այդպէս ես ասում կտորվածներն ու կտորվողները:

Մեզ ասել են եւ ասում են. «Ի՞նչ սպանում էք տաղանդները, դուք գերեզման էք փորում մեր գրական գործիչների համար»: Սարսափելի գործ է թոււմ է թէ «Մշակը» մի առանձին կույտ, մի առանձին պաշտամունք ունի կոտորելու, գերեզմաններ տարածելու պաշտա-

մունք: Եւ ասում են. «Ի՞նչ սպանում էք տաղանդները, դուք գերեզման էք փորում մեր գրական գործիչների համար»: Սարսափելի գործ է թոււմ է թէ «Մշակը» մի առանձին կույտ, մի առանձին պաշտամունք ունի կոտորելու, գերեզմաններ տարածելու պաշտա-

մունք: Եւ ասում են. «Ի՞նչ սպանում էք տաղանդները, դուք գերեզման էք փորում մեր գրական գործիչների համար»: Սարսափելի գործ է թոււմ է թէ «Մշակը» մի առանձին կույտ, մի առանձին պաշտամունք ունի կոտորելու, գերեզմաններ տարածելու պաշտա-

մունք: Եւ ասում են. «Ի՞նչ սպանում էք տաղանդները, դուք գերեզման էք փորում մեր գրական գործիչների համար»: Սարսափելի գործ է թոււմ է թէ «Մշակը» մի առանձին կույտ, մի առանձին պաշտամունք ունի կոտորելու, գերեզմաններ տարածելու պաշտա-

մունք: Եւ ասում են. «Ի՞նչ սպանում էք տաղանդները, դուք գերեզման էք փորում մեր գրական գործիչների համար»: Սարսափելի գործ է թոււմ է թէ «Մշակը» մի առանձին կույտ, մի առանձին պաշտամունք ունի կոտորելու, գերեզմաններ տարածելու պաշտա-

ԲԱՆՃԱՎՈՐ Է ԿԷՍ

ՆԱՄԱԿ ԳԵՐԱՄԱՆԻՍԹԻՑ

Բերլին, յունիսի 7-ին
Յունիսի 6-ին, ուրբաթ երեկոյան, Բերլինի ֆիլարմոնիայի Օբերլիտ յայտնի դահլիճում կայացաւ հայ ուսանողութեան թիւրքա-որբերի օգտին կազմակերպած գրական-կազմակերպական հայկական երեկոյթը, մասնակցութեամբ Բերլինի համալսարանի եկեղեցական պատմութեան ուսուցչապետ Հարնակի, Վերիս-տանայ արեւելք գիտնական ամսագրի խմբա-րդ զօկտօր Լեպսիուսի, հրապարակախօս դոկ-տօր Լոթրաւսի, Բերլինի արքունական օպե-րայի կորդուէրի օր. Դեախի, Բերլինի կոնսեր-վատօրի ուսուցչապետ Հայրի, վրացուհի երգչուհի օր. Ջերդիլի, դաշնակահարներ Ռ. Ռիտլի, Դ. Բեյլի եւ օր. Ն. Ի. խմբապետ Լոթրաւսի եւ այլն:

Երեկոյթին ներկայ էր բոլորովին ընտիր եւ ինքնակամ հաւաքակալութիւն, բազմաթիւ Բեր-լինի համալսարանի գրեթէ բոլոր ֆակուլտետ-ների մի քանի յայտնի ուսուցչապետներից, գերմանական Բարձր Տան կամ իւրաքանչիւր գերմանական կուսակցութիւնների, իւրաքանչիւր սօցիալ-դեմոկրատների մի քանի իւրաքանչիւր շնչերից, որոնց թոււմ էին Բերն-ստայն, Գրադստեյն (հայկական հարցի բարձ-

րացնողը իւրաքանչիւր) եւ այլն: Բերլինի Պարսից գեապանի ներկայացուցիչ Յովհաննէս Խան-Մասէհեանից, գերմանական, ռուս, հրէայ, բուլղար, սերբ եւ հայ ուսանողներից ու ուսանողուհիներից, բաւականաչափ կանանցից եւ օրիորդներից, Երեկոյթին ներկայ էին եւ Գերմանիայի համալսարանական զանազան քա-ղաքներից եկած հայ ուսանողներ, բայց զըծ-բազմաթիւ չէին քանակութեամբ, երեւի տեղի հեռավորութեան եւ երեկոյթի սեմեստրի ըն-թացքում լինելու պատճառով:

Նկատենք այստեղ, որ Բերլինի հայկական երեկոյթի կազմակերպողները առաջուց բարե-խղճաբար հոգ էին տարել, որ երեկոյթին ներ-կայ լինեն Բերլինի քաղաքական եւ գիտական ազգային շրջաններից մարդիկ եւ աւելի մօտ ծանօթանային հայերի հետ: Եւ նրանք հասել էին իրանց նպատակին, որովհետեւ երեկոյթին յիշատի ներկայ էր, ինչպէս ասացինք, բոլոր-ովին ընտիր եւ ցանկալի հասարակութիւն, ոյ թոււմ եւ շատ յայտնի քաղաքական եւ գիտ-նական գործիչներ:

Այդ հասարակութեան գրաւելուն քիչ չէին նպաստել եւ երեկոյթին մասնակցող երեք գիտ-նական դասախօսներն ու յայտնի գեղարուես-տագէտները: Նոյն իսկ իւրաքանչիւր սօցիալ-դեմոկրատական պատգամաւորներից մի քա-նիս, օր. Բերէլ Բերնշտայն, Գրադստեյն եւ այլն, Բարձր Տան նիստի ժամանակ հայկական երեկոյթի տոնակներն եռանդով տարածել են թէ իրանց եւ թէ քաղաքական ուրիշ կուսակ-

ինքը զօրով խեղդված, գերեզմանի մէջ դրած մի մեծութիւն է:

Սպանվածներ, ոչնչացվածներ կան, այդ Բայց ով սպանեց նրանց—Այն, ինչ անուանվում է բնական օրէնք: Այդ օրէնքով սպանված են նրանք, որոնք չունեն իրանց մէջ ընդունակու-թիւն, որոնք միայն աղմուկ հանել գիտեն, իսկ գործի առջեւ ծոյլ են, անօգնական:

Մի առ-մի քրքրեցէք մեր բոլոր նահատակ-ներին: Եստեղ զրանցից վաղուց են անյայ-տացել, այսպէս ասած արդէն մոռնուած գե-րեզմանների մէջ են պառկած: Եստեղ էլ այժմ են իրանց դիակ, գերեզման յայտարարում: Նա-յում էր դրանց ամեն կողմից, կշռում էր դրանց մտաւոր ունեցած—չունեցածը եւ տես-նում էր, որ չը մեռնել նրանք չեն կարող, որ մահը ինքն իրան է եկել, ոչ ոք նրան չէ հրա-ւիրել:

Տաղանդներ են դրանք, իբր թէ... Բայց ով է ասում թէ տաղանդներ են իրանք, այդ խեղ-ճերը: Ասում են եւ ուզում են, որ տաղանդի փառք վայելն, տաղանդի յարգանք ստանան: Ահա ինչից են մեռնում խեղճերը...

Տաղանդը միշտ յարգվել է եւ «Մշակը» միշտ իմացել է արժանաւոր գնահատութիւն դնել, վերաբերվել գործիչին նրա ընդունակութեան չափի համաձայն: Եթէ, օրինակ, մէկը ունի փոքրիկ շնորհ, նրան չէ կարելի հռչակել հայ-կական Հիւզօ: Եթէ մէկը կարողացել է մի քա-նի աջող ուսանաւորներ դրել, դա չէ նշանա-կում, թէ նրան պէտք է յատկացնել «մեծ բա-նաստեղծ» պատմաւորութիւն: Աս շատ հին, մաշ-ված ճշմարտութիւն է, սա երեկոյթին էլ պիտի յայտնի լինի: Բայց եկե՛ք, տեսէք, որ հայը ուրիշ է. նրան մի ասէք, որ ձերը ունի, այլ ասացէք, թէ նա տիեզերական տաղանդ է: Նրան մի ասէք, թէ պէտք է կատարելագործվել, աշխատել, զարգացնել շնորհը. մի ասէք, թէ նրա այս ինչ պատմաբան այս ինչ պատմաբանութիւն ունի: Ահ, դուրսից մեր չափէք: Ասացէք, եթէ այդ-պէս էլ չը լինի, թէ նա կատարելութիւն է, թէ աւելին սպասել ոչ ոք իրաւունք չունի եր-կնքի տակ եւ այն եւ այլն: Չէք ասի, չէք կարող ասել, եւ ահա հայը կը պատռէ օձիքը, կը սկսէ ծծնել կուրծքը եւ աղաղակն հրապա-րակներում ու տանիքների վրա, թէ ինքը նա-հատակ է, դո՛հ է, թէ իրան սպանեցին, գերեզ-մանի մէջ գրեցին:

Այժմ դուք հակադաս, թէ ինչպէս է «Մշա-կը» կոտորածներ անում: Նրա ամբողջ մեղքն

ցուցնում էր պատգամաւորների մէջ: Հայկա-կան երեկոյթին առաջուց առանձնապէս հրա-ւիրվել էին եւ Բերլինի քաղաքական նշանաւոր օրաթերթերի խմբագիրներից. մի քանիսը, ո-րոնցից շատերը իրանց թղթակիցներն ու ստե-նօգրաֆներն էին ուղարկել եւ որոնք բազմից էին իրանց համար յատկապէս պատմաստված սե-ղանի շուրջը: Իրանց թոււմ կային եւ ուսուց-նի քանի յայտնի թերթերի թղթակիցները եւ այլն:

Երեկոյթը սկսվեց եւ բազմեց երեկոյան ժամը 8-ին ուսանող նախարանի ղեկավարու-թեամբ նախապատրաստված «Մեր հայրենիք» երգով, որից յետոյ եկեղեցական ընդհանուր պատմութեան աշխարհահռչակ ուսուցչապետ Հարնակի կարգաւ «Հայկական եկեղեցին» վեր-նագրով իր վերին աստիճանի հետաքրքրական դասախօսութիւնը, որը մի ժամից աւել տեսեց: Վերադառնալով գոյց է մի ուրիշ աւելի յարաւոր առթիւ: Նորից վերադառնալով թէ վերոյիշեալ եւ թէ երեկոյթի միւս դասախօսութիւններին, բաւականապէս այստեղ դրանք միայն ամփոփ-եւ համարում բովանդակութեամբ:

Յարգելի ուսուցչապետ Հարնակի իր դասա-խօսութեամբ մասնակցող երեկոյթին ներկայ եղող հասարակութիւնը հայոց եկեղեցու ծաղ-ման, նրա պատմական զարգացման ու հայերի համար կատարած գերի հետ սկզբից մինչեւ մեր օրերը: Նա շնչեղ գլխաւորապէս ասն բա-նի վրա, որ գերմանական ազդը երեք կապով է կապված հայոց ազգի հետ: Վերոյիշեալ եր-

պն է, որ աշխատում է Պատմից շատ ճշ-մարտութիւնը սիրել: Իսկ մեր բոլորիկ Պա-տմիցը ասում են. «Ո՛յ, մեղ աւելի սիրեցէք քան ճշմարտութիւնը, թէ չէ մենք նահատակ-ներ կը դահանք եւ մեր արիւնը ձեռ գլխին կը թափենք»:

Լաւ ցանկութիւն է, չէ: Եստեղ ասեցինք, սակայն, սիրել ճշմարտու-թիւնը, ամենեւին ուշք չը դարձնելով, թէ ինչ կ'ասեն մեր պատմիկ Պատմիցները: Գնաւ թիւն, այն, եւ մենք ինչ մեղաւոր ենք, որ ձեզ սպանում է ճշմարտութիւնը:

Եւ սուտ էլ է, թէ ճշմարտութիւնը սպանող է: Ո՛յ, Պէտք է հակաանալ, թէ ինչ է անում ճշմարտութիւնը:

Ճշմարտութիւնը, անկասկած, սպանում է եւ պիտի սպանէ հայկական Հիւզօներին, հայկա-կան Շիլլերներին, Բայրօններին, որովհետեւ սրանք հայկական մեծամտութեան ստեղծա-ցնորդներ են: Նրանք չը կան եւ չեն կարող գո-յութիւն ունենալ, քանի որ գոյութիւն ունի ճշմարտութիւնը: Բայց նոյն ճշմարտութիւնը կատարեալ իրաւունք է տալիս, որ ապրեն եւ մնան հայկական փոքրիկ ձիւղեր, չափաւոր շնորհներ, նոյն իսկ տաղանդներ: Տաղանդ, այն, բայց ինչ չափով, ինչ յատկութիւններով: Հար-ցը ամբողջապէս սրա մէջն է. եւ ճշմարտու-թիւնը երեք չի թոյլ տայ, որ այդ հակադո-ղութիւնները, այդ չափը կորչեն:

Ճշմարտութիւնը, ճիշտ է, դաճաղներ ունի պատրաստած ոչնչութիւնների համար, նրանց համար, որոնք անընդունակ են, ծոյլ են, ան-բարեխիղճ են, արտաւորներ են: Եւ շատ հիւս-նալի է, որ այսպէս է: Ուրիշ կերպ մենք չէինք կարող ապրել: Ուրիշ կերպ չէր լինի այն զը-տող, մաքրող ոյժը, որ դէն է շարտում ան-պէտքներին, առաջ է քաշում իսկական արժա-նատրութիւն ունեցողներին:

Մի թէ այս ոյժը այնքան ստորափելի է, ինչպէս թուում է շատերին:

Ճշմարտութիւնը մեզանում միայն պաշտօն չէ կատարում: Որովհետեւ մենք այնքան դժ-բաղդ չենք, որ առաջ քաշելու, յարգելու բան բոլորովին չունենանք:

Բայց, զմեզ դարձրաւ, մեզանում հէնց այն-պէս է, որ իսկական արժանատրութիւնը պէտք է լետ քաշված, մոռացված լինի, քանի որ չը գիտէ օձիք պատռել, վախեցնել մարդկանց ը-մելիքը: Եստեղ ասեցինք, որ արդէն փրագներով, ինչպէս են զրոյցները սպանված տաղանդների, խեղդ-

կու ազդերն էլ պատկանում են ինքն-գերմա-նական ազգերի ընտանիքին, երկուսն էլ քրիս-տոնեական եկեղեցու անդամներն են եւ զեր-ջապէս երկուսն էլ կույտուր—պատմական մի եւ նոյն զարգացումն են արել, ինչպէս որ վը-կայում է ժամանակակից պատմական գիտու-թիւնը: Ընդհանուր պատմութեան վկայու-թեամբ առաջին ազգն էին հայերը, որոնք ա-մենից շուտ եւ առաջ ընդունեցին քրիստոնեու-թիւնը իբրեւ իրանց պաշտօնական եւ պե-տական կրօնը: Բայց աշխարհահռչակ հեղինա-կութիւն Հարնակի աւելադրեց եւ այն, որ հա-յերը քրիստոնեութիւնը ընդունեցին Ասորիքից, որտեղ նա այնքան էլ մաքուր չէր, այլ խառն-վել ու չփվել էր կրօնական ուրիշ դասանու-թիւնների հետ: Գերմանացիների նման հայերն էլ իրանց կույտուրան ստացել են Յունաստա-նից: Հայերն իրանց պատմական կեանքի ըն-թացքում, գլխաւորապէս հինգերորդ դարում, ստեղծեցին եկեղեցական եւ արտաքին մի պատկանելի գրականութիւն, որ մեծ մասամբ մեզ է հասել եւ իր մէջ գիտական տեսակէ-տից մեծ արժէք ունեցող այնպիսի գրութեա-ն է պարունակում, որոնց բնագիտները (զըլ-խաւապէս յունարէն) կորել են եւ մենք զը-րանց մասին գլխաւորապէս տեղեկութիւններ ունենք միմիայն հայկական թարգմանութիւն-ների շնորհիւ: օր. Եւսեբիոսի եկեղեցական պատմութիւնը եւ ուրիշ շատ աշխատութիւն-ներ: Մեծ դժուարութիւններ կրելով հանդերձ, հայերը կարողացան եկեղեցական զարգացման

ված գործիչների մասին կան շատ շատերը, որոնք զոհեր են ծեծում, ուշադրություն են մուրում, գովասանք ու փառաբանություն են պարգևատրում իրանց գլխի համար. եւ այդպիսիները հրապարակում են, բենգալեան կրակներ են վառում իրանց շուրջը, իսկ նեղին ընկած ժամանակ հօ կայ նրանք համար փրկություն ամենալավ միջոցը—զոհ, նահատակ, խեղդված ու գերեզման իջեցրած...

Եւ այդ իսկ ժամանակ իսկական արժանաւորութիւնը կարող է ոչ միայն մոռացվել, այլ եւ նոյն իսկ արհամարհվել... Եւ ճշմարտութեան պարտքն է այդտեղ արդէն սպանողի դերը չը կատարել, այլ ուղիղ հակառակը—կենդանացնողի դերը:

Եւ կը կամենայի մի պատկեր դնել ձեր առջեւ, իմ ասածները աւելի փաստօրէն լուսաբանելու համար:

Թիֆլիսում կազմվում է մի թատրոնական ընկերութիւն, որի նպատակն է խրախուսել բնական գեղարուեստին ծառայողներին Շատ լաւ, շատ հիմնադրութիւնը ուրախ ենք, մենք ծափահարում ենք:

Բայց ահա հենց սաղային անգամից մի «խրախուսական» վարմունք: Եւ գիտէի այդ վարմունքը վաղուց, բայց սիրտ չէի անում գրելու, որովհետեւ աչքի առաջ ունէի եւ այժմ էլ ունեմ, որ նոր սկսվող գործ է, որ պէտք է ամեն կերպ աջակցել նրան, ամենայն աջողութիւն ցանկալի եւ, ինչպէս եւ, համոզված եմ, ձեզանից ամեն մէկը, այդ նորաբացվող հիմնարկութեան միայն լուսութիւն ենք ուղղում:

Բայց ահա «խրախուսական» վարմունքը երեւան է դալիս ընկերութեան ընդհանուր ժողովում, անցնում է մամուլի մէջ: Հարցը հրապարակական ընդարձակութիւն է ստանում: Դարձնում լինում Բն, դա կը նշանակէր թէ եւ ճշմարտութիւնը Պատմութիւնը ստոր եւ դասում: Այդպէս չի լինի, ի հարկէ...

Դուք, անշուշտ, գիտէք թէ բանն ինչ է: Դրամատիկական ընկերութեան վարչութիւնը, ձեռնարկելով խումբ կազմելու, բոլորովին աւելորդ է համարում դիմել տիկին Սիրանոյշին, անտես է անում նրան, ոչինչ խօսք չէ անում նրան: Մինչդեռ մի քանի գերասանների եւ գերասանուհիների վերաբերմամբ տեղի է ունենում այն, ինչ անտեսում են ամբողջ ձեռքի խելք: Թիֆլիսը իր խումբն է ուղղում ունենալ, Բագուն—իրանը: Եւ ահա այն դերասաններին, որոնք առաջուց համարեա խօսք էին տուել Բագուն գնալ, Թիֆլիսը համարեա խելքում է, բերում է իր խմբի համար: Տիկին Սիրանոյշի վերաբերմամբ ոչ միայն այդպիսի մերցնութիւն տեղի չէ ունենում, այլ եւ նրան խապառ մոռանում են:

Տանեակ տարիներով ծառայել հայոց խղճուկ բեմին, համարվել նրա առաջնակարգ զարդը եւ յանկարծ... իսպառն մոռացվել մի ընկերութեան կողմից, որի կանոնադրութիւնը տեսնում է, թէ նա պէտք է խրախուսէ բեմի ծառայողներին:

Ինչ է ասա—Ամեն ինչ, բայց ոչ խրախուս-

մէջ իրանց ազգային ինքնությունը պահպանելու համար: Հայկական եկեղեցին լատինական եկեղեցու հետ շատ քիչ յարաբերութիւն ու չը փութն է ունեցել, յունական եկեղեցու վերաբերմամբ մի շարք հակադրութիւններ է զարգացրել, չը նախելով, որ նրա հետ ունեցել է մի քանի ընդհանուր գծեր: Յունական եկեղեցու փորձերը զուր անտես հայկական եկեղեցին հակաազգայնացնելու (entnationaliesiren) Շրջապատող թշնամի ազգերն էլ չը կարողացան հայերի մտաւոր կենսքը ճնշել, նոյն իսկ 14—17 դարերի պէս ծանր ու դժուար ժամանակներում: Նրանք իրանց պատմական կենսքի ընթացքում ցոյց են տուել իրանց սէրն ու համակրութիւնը կուլտուրական գանազան շարժումների վերաբերմամբ, դրա համար էլ գերմանական ազգի բարոյական պարտականութիւնն է մտաւոր զարգացման ձգտող հայերին օգնել ու պաշտպանել, իսկ Բերլինի համալսարանը բաւականանայ միայն իր մի պարտականութեամբ, այն է նպատակայարմար եւ գիւրքին միջոցներ տալ իր պատերի մէջ սովորող հայերին միշտ առաջադիմելու:

Սրանով վերջացրեց յարգելի գիտնականը իր դասախոսութիւնը, որ ընդունվեց երկարատեւ ծափահարութիւններով եւ ցնծայից աղաղակներով: Վերոյիշեալ դասախոսութիւնից յետոյ Բերլինի արքունական օպերայի հոշակաւոր երգչուհի օր. Դեստինը մեծ աջողութեամբ երգեց «Արիա» օպերայի մի արի, որի համար ծափահարութիւնների արժանացաւ եւ հասարակական խնդրանք մի ուրիշ կտոր էլ երգեց:

սանդ, ոչ նոյն իսկ մի հասարակ քաղաքավարութիւն...

Գոնէ չը լինէր այդ «խրախուսել» բառը: Բայց քանի որ նա կայ, քանի որ նա ընկերութեան, այսպէս ասած, հոգին է կազմում, դուք իրաւունք չունէիք մոռանալու, որ տիկին Սիրանոյշը այժմ ամենաառաջին բեմական գործիչն է մեզանում:

Գործիչ եւ ասում, այսպէս էլ պէտք է օգնելու: Տաղանդի հարցը մի կողմ թողելով, վերցրէք միայն այն, ինչ այս չորս—հինգ տարիների ընթացքում արել է տիկին Սիրանոյշը: Եւ դա անհերքելի համար. վերցրէք Նոր-Նախիջևանը, Մոզդուրը, Արմաւիրը, Կարսը, Երեւանը: Ամեն տեղ նա հաւատ է ներշնչել հային, թէ նա կարող է ունենալ մայրենի բեմը, ամեն տեղ նրա շնորհիւ մայրենի գեղարուեստը ոգևորել է ժողովուրդը, անկեղծ, մանկական հիացմունք է պատճառել այնպիսի կորած, մոլորված տեղերում, որոնց անունն էլ չէիք բերել: Եւ յանկարծ այսպիսի մի երախտաւոր գործիչ, իսկական արժանաւորութիւնը արհամարհված է թատրոնական վարչութեան կողմից: Աւելորդ են համարել անգամ մի նամակ գրել նրան, երկու բառ ասել:

Վարչութիւնը մի ողորմելի բացառութիւն տուեց ընդհանուր ժողովին: Ինքը, իբր թէ, գիտէր, որ տիկին Սիրանոյշը պիտի ծանր աշխատէր, մենք փող պահանջէ, ուստի եւ չը դիմել նրան:

Գիտէր... Կարծես թէ բանը գիտենալու մէջ է, կարծես թէ երբեմն շատ գիտցողը շատ չէ սխալներ գործում, Գիտէր... Բայց ինչ գիտէր, քանի որ ոչինչ բանակցութիւն չէր սկսել տիկինը: Եւ պատասխան իմանալու համար ինչ էր հարկաւոր... 7 կոպէկանոց մի մարկա, ուրիշ ոչինչ:

Գործը, սակայն, շատ պարզ էր: Հայը շատ քիչ է կարողանում քողարկվել օրինաւոր կերպով: Նոյն այդ ժողովում, ուր տիկին Սիրանոյշի հարցը այդպէս էր բացառվում, քուէ-արկութեամբ ընկերութեան նպատակը անգամ ընտրվեց մի պարսի, որի թատրոնական գործունէութիւնը դեռ մի մեծ հարցական նշան է եւ յամենայն դէպս մի ոչնչութիւն է, համեմատած տ. Սիրանոյշի հետ: Պատուաւոր, նըպատուղ եւ ալ արտոյններ ունեցող անգամներ որոնող ընկերութիւնը չէր կարող տիկին Սիրանոյշին ընտրել իր անգամ, ինչպէս գնահատութեան մի թեթեւ նշան:

Բայց ինչ եւ ասում... Տիկին Սիրանոյշը դերասանուհի է, իսկ դերասանուհու, ինչպէս եւ դերասանի հետ կարելի է միայն խօսել այն մասին թէ էժան գիտի կը գնա ծառայելու:

Ծաւալի է Դերասանի եւ թատրոնական գործը ղեկավարողների մէջ պէտք է ընկերական յարաբերութիւնն ստեղծվի: Եւ այս մասին գիտ անցնալ տարի եւ ամիս ունեցել խօսելու:

Մի ուրիշ փաստ էր: Դերասան պ. Միրզեան նոյնպէս չէ արժանացել ընկերութեան ուշադրութեան, նրան էլ ոչինչ առաջարկու-

Դրան յաջորդեցին Մ. Սպիվակի ղեկավարութեամբ խմբի երգած «Կիլիկիա» երգը եւ «Ձանգիւղ» ժողովրդական երգը (վերջինս առանց Սպիվակի ղեկավարութեան), որոնցով վերջացաւ երեկոյթի ծրագրի առաջին մասը:

Երկրորդ մասը սկսվեց «Der christliche Orient» («Քրիստոնէայ արեւելք») գերմանական հանգչուի խմբագրի ղոկտօր Լեպսիուսի «Հայ ժողովուրդը եւ Արեւելքի քաղաքակրթելը» վերնագրով շատ հետաքրքրական դասախոսութեամբ: Հայերին արդէն վաղուց ծանօթ յարգելի ղոկտօր հայերի մասին մի ամփոփ կուլտուրա-պատմական ակնարկ գցելուց յետոյ, հասարակութեան ուշադրութիւնը դարձրեց նրանց մտաւոր, տնտեսական եւ սոցիալական ներկայ դրութեան վրա: Լեպսիուսի կարծիքով, հայերը ժամանակակից արեւելքի ամենաընդունակ ազգն են կազմում, որոնք իրանց հարեւան ազգերի վերաբերմամբ կարող են կուլտուրական շատ պարտականութիւններ կատարել: Մասնացոյց անկող պն հանգամանքի վրա, որ ներկայումս արեւմտեան Եւրոպան ընդհանրապէս եւ Գերմանիան մասնաւորապէս ձգտում են եւրոպական քաղաքակրթութիւնը տարածել արեւելքում, Լեպսիուսը խորհուրդ է տալիս դրա համար դիմել հայերի օգնութեան եւ նրանց միջոցով կատարել վերոյիշեալ կուլտուրական միտքան, որովհետեւ արեւելքում միայն հայերն այդ բանի համար ձեռնհաս եւ ընդունակ գիտաւոր տնդնեցիմ:

Բերլինի կոնգրեսի արձանագրութեան յոսկում

թիւն չէ արված: Եւ պ. Միրզեանին մնում է ծառայել վրաց բեմին ու վայելել նրա վրա տաղանդաւոր դերասանի պատիւները:

Այսպէս ենք մենք վարվում: Բայց արանով մենք մեզ ենք արհամարհում եւ ոչ թէ տիկին Սիրանոյշին կամ մի ուրիշին:

Ահա ինչ է ասում ճշմարտութիւնը...

ՆԱՄԱԿ ԷԶՄԻՍՏԵՆԻՑ

Յունիսի 2-ին

Մայիսի 29-ին Վեհափառի հրաւերով եկաւ Էջմիածին ձեռնարանի նախկին տեսուչ պ. Կ. Կոստանեանց եւ իջեւանեց վանքի եպիսկոպոսական ընտանեացնորից մէկուս: Սրան դիմաւորելու համար ընդունաւ էր գնացել ձեռնարանի այժմեան տեսուչ Կարապետ վարդապետ վանքի քանոնի կառքով:

Թէ ինչու համար է պ. Կոստանեան շտապել Էջմիածին, մինչեւ այժմ դեռ հաստատապէս յայտնի չէ, թէ եւ իսկ կերպով լուր է տարածվում, որ եկած է ձեռնարանի տեսչութեան պաշտօնը ստանձնելու, որովհետեւ ուսուցչական խումբը, բացի պ. Մէթից եւ ձեռնարանի բազմաշխատ քարտուղարից, զգուհ է Կարապետ վարդապետի տեսչութիւնից եւ ստիպված պէտք է լինի հեռանալ: Եթէ տեսուչը կրկին Կարապետ վարդապետ լինի: Երեւի այս լուրերի հիման վրա էր, որ պ. Կոստանեանի յայտնվելը բաւական չիփթեցրեց մի խումբ հոգեւորականների, որոնք ձեռնարանի վրա նախում էին, որպէս իրանց սեփականութեան, եւ յոյս չունէին երբ եւ ից բաժանվել այդպիսի մի հանդիսու եւ օգտակար տեղից: Բայց որովհետեւ տեսչութեան ամենաարժանաւոր թեկնածուն միաբանութեան մէջ համարվում է Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեան, որ այժմ գտնվում է Պետերբուրգում եւ որին ամեն կերպ աշխատում են հետու պահել Էջմիածնի ձեռնարանից, ուստի այժմեան տեսչի մնալու կամ հեռանալու հարցի մասին աշխատում է, որքան կարելի է, լուսութիւն պահպանել:

Այսօր այդ հանելուկներից մէկը պարզվեց եւ ահա ինչպէս. ձեռնարանի այժմեան տեսուչ Կարապետ վարդապետը, վերջացրած լինելով ձեռնարանի զննութիւնները եւ սանքի փոխադրութեան եւ այլ հարցերը, մայիսի 31-ի երեկոյան հրաւերվում է ուսուցչական խմբին ժողովի եւ այդ ժողովում ամբողջ խմբի առաջ կարճառօտ, բայց բաւական զգացված ճառով, լուսելով իր եռամսյակ գործունէութեան արդիւնքը, հրաժարվում է ձեռնարանի տեսչի պաշտօնից: Տեսուչը վերջացնում է իր ճառը եւ սպասում, որ եթէ ոչ ամբողջ ուսուցչական խումբը, գոնէ ուսուցիչներից մէկն ու մէկը կը բարձրանայ տեղից եւ կը գովարանէ նրա եռամսյակ գործունէութիւնը: Սակայն ուսուցչական խմբից ոչ ոք, նոյն իսկ հայր տեսչի բարութիւնները վայելող ուսուցիչներից եւ ոչ մէկը չէ ուղղւում բարձրանալ տեղից եւ գոնէ երկու բառով չնորհակալութիւն յայտնել:

Կանար-ուսուցչապետ Հայր Կարապետի կերպով նուազեց շուրթակի վրա Գոյումարի «Andante» եւ Թաֆի «Andante», որ գեղարուեստական նոր գուրաճութիւն պատճառեց հասարակութեան:

Շատ աղող եւ դուրեկան ճախով երգեց եւ եւ Բերլինում հիւր եղող վրացուհի շնորհալի երգչուհի օր. Ջերգիլին (Սամսոն եւ Դայրիա) օպերայից մի «Arie»: Հայկական խմբի «Մայր Ներաբո» եւ Ջերգիլին մարդով վերջացաւ երեկոյթի ծրագրի երկրորդ մասը:

Երեկոյթի երրորդ մասը սկսվեց ղոկտօր Բոհրբախի դասախոսութեամբ, որ նուիրված էր Հայաստանին եւ հայերին: Շատ լաւ ծանօթ լինելով իր ընտրած նիւթի հետ, նա միանգամայն բաւականութիւն պատճառեց Հայաստանում եւ հայերի ներկայ դրութեան, նրանց նիստ ու կացի, սովորութիւնների մասին եւ այլն: Դասախոսը միանգամայն իրաւունք ունէր իր պատմութեան ընթացքում չեղտելու, որ ինքը շատ լաւ ծանօթ է իր դասախոսութեան նիւթի հետ, որովհետեւ շատ բան, ինչ որ իր աչքով տեսել եւ ուսումնասիրել էր, նոյն իսկ լուսաւորական ճշմարտութեամբ էր պատմում: Բոհրբախի դասախոսութիւնից յետոյ հասարակութեան ցոյց տուին նպատակայարմար կենդանի պատկերներ, օրինակ, հայ որդեր, հայ գիւղական ընտանիք, քրդերի աւաւանդը եւ հայ աղջիկների առեւանգումը, գիւղական երիտասարդների շնորք իրանց ջոյրերին թշնամիների ձեռքից ազատելու եւ այլն, որոնք հասարակութեան վրա ցանկալի տպաւորութիւն թողե-

Ինչ եւ իցէ, սակայն փաստն այն է, որ Կարապետ վարդապետը հրաժարվել է ձեռնարանի տեսչի պաշտօնից: Բայց թէ ով կը լինի նոր տեսուչը, այդ մասին կը գրենք ժամանակին, իսկ այժմ այսքանն է միայն յայտնի, որ միաբանութեան մեծամասնութիւնը ցանկանում է տեսուչ ունենալ Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեանին, սակայն մի մասն էլ խօսում է պ. Կոստանեանցի մասին: Ասում են նախապէս, որ գոյություն չունի տեղիք չը տալու համար, միայն կայ պ. Կոստանեանցին սարկաւազութեան աստիճան տալ եւ յետոյ միայն նշանակել տեսուչ:

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՆ

Ուրբաթ, յունիսի 7-ին, Թիֆլիսում վախճանվեց կովկասեան զօրքերի երկրորդ կորպուսի հրամանատար ինֆանտրիայի գեներալ Ջեզեման: Հանգուցեալ յայտնի էր իր մասնակցութեամբ վերջին ռուս-թիւրքական պատերազմի մէջ: Նրա յուզարկաւորութիւնը տեղի կունենայ երկուշաբթի, յունիսի 10-ին:

Թիֆլիսի քաղաքային ուսումնարանական կոմիտէն իր վերջին նիստում, որ տեղի ունեցաւ յունիսի 6-ին, զննեց Թիֆլիսի նահանգի երկրորդ շրջանի ժողովրդական ուսումնարանների վերատեսչի միջնորդութիւնը, որով ն խնդրում էր քաղաքային վարչութիւնից 300 ռուբլի նպատակ նշանակել Թիֆլիսի հայ-լուսաւորական ուսումնարանների օգտին: Ուսումնարանական կոմիտէն որոշեց մերժել վերատեսչի այդ միջնորդութիւնը՝ պատճառաւորելով մերժումը քաղաքային միջոցների սղութեամբ:

Երէկ, յունիսի 8-ին, անցած տարիների նման, Կոջորում բացվեց պօստ-հեռագրատան բաժանմունք:

«KABEABE» լրագիրը հաղորդում է, թէ Բագուի նահանգապետը միջնորդութիւն է յարուցել Կովկասեան բարձր իշխանութեան առաջ, որով խնդրում է Բագուն հրատարակվող պարբերական հրատարակութիւնների գործընկերութիւնը յանձնել մի առանձին անձի, որովհետեւ այժմ այդ պաշտօնը կատարող փոխ-նահանգապետը ծանրաբեւեռված է իր անմիջական պարտաւորութիւնների կատարումով: Կատարելապես խորհուրդը, զննելով այդ միջնորդութիւնը, որոշեց Բագուի պարբերական հրատարակութիւնների գործընկերութիւնը յանձնել Բագուի նահանգական վարչութեան խորհրդական Տերկետիլին: Եւ տեղի նրան դրա համար առանձին վարձատրութիւն ներքին գործերի միւնիստրութեան գումարներից:

«Новое Обозрѣніе» լրագրին հաղորդում են Բորժոմից, թէ այնտեղ յուլիսի 5-ի գիշերը զգացվել է բաւական ջօրեղ երկրաշարժ, որ տեւել է մի րանի վայրկեան:

Ինչ եւ նրա խնդրելով վերոյիշեալ պատկերները շատերը կրկնվեցին:

Կենդանի պատկերներին յաջորդեցին կովկասեան պարեր, օրինակ, Ն. Տիգրանեանի կողմից օգտիցիայով «ուզուն դարա» շնորհալի կերպով պարեց տիկին Թոփչեան, իսկ լեզգիական պարեց մի օտարազգի օրիորդ, որից յետոյ սկսվեց իսկական եւրօպական պարահանդէսը: Kafe pause-ով եւ տեսեց մինչեւ առաւելագույն ժամը 6-ը: Դրանով էլ վերջացաւ Բերլինի հայկական երեկոյթը:

Ինչ վերաբերում է երեկոյթի ընդհանուր եւ ամբողջական տպաւորութեան, պէտք է խոստովանել, որ հրաշալի էր եւ միանգամայն պատիւ է բերում նրա կազմակերպողներին: Այդպիսի բազմակողմանի ծրագրով երեկոյթները անկի շուտ ու ցանկալի կերպով կը ծանօթացնեն գերմանացիներին հայերի հետ, քան թէ Հայացիքի ձեռնարանական ընկերութեան պէս հայկական ընկերութիւնները, որոնք իրանց գոյութիւնը թղթի վրա են պահպանում եւ մենամարտութիւններով ու մանր հաշիւներով են զբաղվում:

Բերլինի հայկական երեկոյթը ժամանակակից գրական կարգով Գերմանիայի երկրորդ հայկական երեկոյթն էր, որովհետեւ, ինչպէս արդէն յայտնի է, հայկական առաջին երեկոյթը տեղի ունեցաւ Հայլէում, թէեւ ոչ աջողութեամբ:

Լ. Բարայան

Электротечатня Груз. Издат. Т-ва, Б.-Ванская ул.